# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2024 թվականի

Հուլիսի 3-ին կայացած գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2023-2024 ուստարվա Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների արդյունքների ամփոփում /զեկ. ծրագրի ղեկավարներ/
2. 2023-2024 ուստարվա առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի և բակալավրիատի 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում /զեկ.Ա.Բաղդասարյան/:
3. Տպագրության երաշխավորման հարց /Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոց. Հ. Հովհաննիսյանի «ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԾՏԵՄԱՐԱՆ» Ձեռնարկ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար/:
4. Պրոֆեսորի օգնականի ինստիտուտի ներդրումը ֆակուլտետում:
5. e-learning համակարգում առարկայական դասընթացների պլանների ներմուծում: /զեկ. Ն. Ալավերդյան/
6. Ասպիրանտական թեմաների հաստատում
7. Ընթացիկ հարցեր:

1. Ա.Բաղդասարյանը խոսք տրամադրեց 2023-24 ԿԾ- ի ղեկավարներին ամփոփելու

2023-2024 ուստարվա Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների արդյունքները: Ելույթ ունեցան՝ Ն. Խաչատրյանը, Հ. Ավանեսյանը, Ն. Հարությունյանը:

Քննարկվեց նախապաշտպանությունների անցկացման ձևաչափը և ժամանակացույցը; Ներկայացվեց նաև ավարտական քննությունների վերաբերյալ նախագահի կողմից հնչեցրած դիտողությունները, որոնք վերաբերում են թեմաների արդիականացմանը:

Նիստին ներկաէր Է. Ասրիյանը : Նանշեց,որ գոյություն ունի գործող կարգ նախապաշտպանությունների վերաբերյալ .

- Թույլատրել
- Կատարել փոփոխություն,որոշում կայացնել
- Չթույլատրել

Ն. Հարոյանը հարց բարձրացրեց ՄՈԳ-ի վերաբերյալ, Է. Ասրիյանը պատասխանեց, որ այն չպետք է ազդի ավարտական աշխատանքների գնահատականների վրա:

2. Ն.Ալավերդյանը նշեց,որ 04. 07. 24-ից սկսվում է լուծարքների շրջանը: Զգուշացրեց «Ռեգիստր» համակարգում լինել ուշադիր գնահատականները փոխանցելիս:

Է. Ասրիյանը նշեց, ու համակարգ մուտք գործած թվանշանները փոփոխման ենթակա չեն: Ռեկտորի կողմից կա որոշում սխալների դեպքում տալ նկատողություն: ՏՏ վարչությունը մշակում է համակարգ հիշեցման համար:

3. Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց ներքին դրամաշնորհների շրջանակում գրված «ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ›› ձեռնարկը, որը բաղկացած է 1070 վարժություններից և առաջադրանքներից:

Այն երաշխավորվեց տպագրության:

3. Ա.Բաղդասարյանը նշեց որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմի

4. Ա.Բաղդասարյանը ներկայացրեց պրոֆեսորի օգնականի ինստիտուտի ներդրումը ֆակուլտետում:

5. e-learning համակարգում առարկայական դասընթացների պլանների ներմուծում: /զեկ. Ն. Ալավերդյան/ : Ն. Ալավերդյանը նշեց, որ ամբիոնները

ժամանակին մուտքագրեն առարկայական պլանները համակարգում:

6. Գիտական ղեկավարների և գիտական թեմաների հաստատման հետ կապված նշվեցին հետևյալ թեմաները

1. Արփինե Այվազյան «Առօրեականությունը որպես կենսաշխարհի մեկնաբանման էկզիստենցիալնախագիծնաստասիա», Թ. 00. 01, /գիտ. ղեկավար պրոֆ. ՝ Էդ. Հարությունյան/

2. Էմմա Արզինա «Հետծննդյան շրջանում մոր և նորածնի քնի ռիթմերի հարաբերակցության կլինիկական-հոգեբանական պատկերը» / ԺԹ.00.0Ձ, Գիտ ղեկավար, պրոֆ՝ Գ. Շավերդյան /

3. Արմինե Փաթաթյանի «Ոգեղենության հիմնախնդիրը ախտաբանության համատեքստում» / ԺԹ.00.0Ձ, Գիտ ղեկավար, պրոֆ՝ Գ. Շավերդյան /

4. Եվս թեմա Անձի հոգեբանության ամբիոնից

7. Նիստի շրջանակներում քննարկվեցին այլ հարցեր

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան



Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան